ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-26/5-1

ք. Երևան «16» հոկտեմբեր 2025թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Գեղամ Վարդանյան Ռուբենի ԱՁ, ի դեմս տնօրեն Գեղամ Վարդանյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 11 143 500 (տասնմեկ միլիոն հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 **Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝**

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ

ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 **Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ ՀՎՀՀ 02505554	Գեղամ Վարդանյան Ռուբենի ԱՁ Հասցեն՝ ք. Երեւան Անդրանիկի փ. 77/5 «Արդշինբանկ» ՓԲԸ ՀՀ՝ 2480102184560000 ՀՎՀՀ՝ 80102727
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 16 » հոկտեմբերի 2025 թ. կնքված
ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-26/5-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	պայմանագրի առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
1	50111130/541	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	1 200 000	1	ք. Երևան, մասնակարարի կողմից նշված հասցեն	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 350 օրացուցային օր
2	50111130/542	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	1 000 000	1		
3	50111130/543	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	4 443 500	1		
4	50111130/544	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	900 000	1		
5	50111130/545	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	700 000	1		
6	50111130/565	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	700 000	1		
7	50111130/566	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	1 100 000	1		
8	50111130/567	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	1 100 000	1		

** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Գեղամ Վարդանյան Ռուբենի ԱՁ
Հասցեն՝ ք. Երեւան Անդրանիկի փ. 77/5
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 2480102184560000
ՀՎՀՀ՝ 80102727

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« 16 » հոկտեմբերի 2025 թ. կնքված
ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-26/5-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գներ

Հ/Հ	SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները ըստ չափաբաժինների							
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3	Չափաբաժին 4	Չափաբաժին 5	Չափաբաժին 6	Չափաբաժին 7	Չափաբաժին 8
		ՈՒԱԶ Պատրիոդ, ՈՒԱԶ 390902	Միցուբիշի L200	Վազ 2121, Վազ 21120	Միցուբիշի Պաջեռո	Տոյոտա Կորոլլա	Տոյոտա Քեմրի	Տոյոտա Լենդ Քրաուզեր Պրադո	Հյունդաի Տուքսոն
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Բռնկման համակարգի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
2	Սառեցման համակարգի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
3	Յուղման համակարգի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
4	Արտացման համակարգի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
5	Կցորդման համակարգի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658

10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
13	ABS համակարգի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
16	Թափքի վիճակի ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1093	753	1444	759	1103	651	1026	658
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը								
	1. Շարժիչ								
18	Շարժիչի հանում և տեղադրում	23682	17577	31290	17706	25735	15198	23933	15353
19	Շարժիչի վերանորոգում	72868	87883	96277	88530	128673	75991	119666	76765
20	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	4372	4018	5777	4047	5882	3474	5470	3509
21	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5465	6277	7221	6324	9191	5428	8548	5483
22	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	20039	16321	26476	16441	23896	14113	22224	14256

23	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	5101	4520	6739	4553	6617	3908	6154	3948
24	Շարժիչի գլխիկի վերանորոգում	16395	17577	21662	17706	18382	15198	23933	15353
25	Փականի խցուկի փոխարինում	1093	1255	1444	2529	3676	2171	3419	2193
26	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	7287	8788	9628	8853	12867	7599	11967	7676
27	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	9108	8788	12035	8853	12867	7599	11967	7676
28	Հրիչի փոխարինում SOHC	1093	1507	1444	1518	2206	1303	2051	1316
29	Ատամնավոր փոկի փոխարինում	16395	11299	21662	11382	16544	9770	15386	9870
30	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5101	6277	6739	6324	9191	5428	8548	5483
31	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	14574	16321	19255	16441	23896	14113	22224	14256
32	Մխոցային օղակների փոխարինում	30969	37664	40918	37941	55145	32568	51286	32899
33	Թափանիվի հանում և տեղադրում	9108	7533	12035	7588	11029	6514	10257	6580
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ								
34	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	364	251	481	253	368	217	342	219
35	Յուղի պոմպի փոխարինում	1822	2511	2407	8853	11029	6514	11967	7676
36	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5465	6277	7221	11382	14705	8685	15386	9870
37	Բռնկման կարգավորում	1822	1255	2407	2024	2941	1737	2735	1755
38	CO կարգավորում	1093	753	1444	1265	1838	1086	1710	1097
39	խարնարակի հանում և տեղադրում	1822	0	2407	0	0	0	0	0
40	Խարնարակի վերանորոգում	2186	0	2888	0	0	0	0	0
41	Օդի զտիչի փոխարինում	364	502	481	759	1103	651	1026	658

42	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	1822	1255	2407	3794	5515	3257	5129	3290
43	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	5465	7533	7221	10118	14705	8685	13676	8773
44	Բենզամղիչի փոխարինում	1822	3766	2407	3794	5515	3257	5129	3290
45	Վառելիքի զտիչի փոխարինում	1822	3766	2407	3794	5515	3257	5129	3290
46	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	2915	3766	3851	6324	3676	2171	8548	5483
47	Տրամլյորի հանում և տեղադրում	1093	0	1444	0	0	0	0	0
48	Տրամլյորի վերանորոգում	729	0	963	0	0	0	0	0
	3. Սառեցման և արտածման համակարգ								
49	Հովհարի փոկի հանում և տեղադրում	729	2009	963	2024	2941	1737	2735	1755
50	Հովհարի հանում և տեղադրում	10930	3766	7221	6324	5515	3257	8548	4825
51	Ռադիատորի հանում և տեղադրում	5101	4520	6739	5565	6617	3908	7522	4387
52	Ռադիատորի վերանորոգում	12752	12555	16848	12647	18382	10856	17095	10966
53	Թերմոստատի փոխարինում	2915	3766	3851	3794	4412	2605	5129	2851
54	Ջրի պոմպի փոխարինում	4372	7533	5777	8853	9191	6079	11967	6580
55	Ընդարձակող բաքի փոխարինում	1093	1255	1444	2024	2941	1737	2735	1755
56	Խլարարի հանում և տեղադրում	1822	2511	2407	3794	3676	2171	5129	3290
57	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1093	1255	1444	2024	1838	1086	2735	1097
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ								
58	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	5465	6277	7221	6324	9191	5428	8548	5483
59	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	3643	4520	4814	4553	6617	3908	6154	3948

60	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	9108	8788	12035	8853	12867	7599	11967	7676
61	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1822	1255	2407	1265	1838	1086	1710	1097
62	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	1822	1255	2407	1265	1838	1086	1710	1097
63	ՓՏ-ի հանում և տեղադրում	10930	10044	14442	10118	14705	8685	13676	8773
64	ՓՏ-ի վերանորոգում	34612	35153	45731	35412	51469	30396	47867	30706
65	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1822	2511	2407	2529	3676	2171	3419	2193
66	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	9108	8788	12035	8853	12867	7599	11967	7676
67	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	3643	3766	4814	3794	5515	3257	5129	3290
68	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	12752	8788	16848	8853	12867	7599	11967	7676
69	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	21860	15066	28883	15177	22058	13027	20514	13160
70	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	20039	13810	26476	13912	20220	11941	18805	12063
71	ԱՓՏ-ի վերանորոգում	127518	87883	168484	88530	147055	86847	119666	76765
72	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	5465	3766	7221	3794	5515	3257	5129	3290
73	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	5465	3766	7221	3794	5515	3257	5129	3290
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ								
74	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	7287	7533	9628	12647	0	0	17095	6580
75	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	23682	22599	31290	37941	0	0	51286	27416
76	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	5465	5022	7221	5059	0	0	6838	4387

77	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	4372	3766	5777	3794	0	0	5129	3290
78	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	3643	3515	4814	3541	0	0	4787	3071
79	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	4736	4520	6258	4553	0	0	6154	3948
80	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	5465	4520	7221	4553	0	0	6154	3948
	6. Առջևի և հետևի կամրջակներ	0	0	0	0	0	0	0	0
81	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	9108	10044	12035	12647	0	0	17095	9870
82	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	23682	23854	31290	25294	0	0	34190	20836
83	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	12752	11299	16848	11382	0	0	15386	9870
84	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	4372	4520	5777	3035	4412	2605	4103	2632
85	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	2915	3766	3851	1518	2206	1303	2051	1316
	7. Կախոց								
86	Տրավերսի հանում և տեղադրում	5465	8788	7221	13912	11029	6514	18805	9870
87	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	4372	3766	5777	3794	4412	2605	5129	3290
88	Անվակունդի առանցքակալի փոխարինում	4372	3766	5777	3794	4412	2605	5129	3290

89	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	4372	3013	5777	3035	4412	2605	4103	2632
90	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	4372	3766	5777	3794	4412	2605	5129	3290
91	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	2186	2260	2888	2276	3309	1954	3077	1974
92	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	1822	2260	2407	2276	3309	1954	3077	1974
93	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1822	1507	2407	1518	2206	1303	2051	1316
94	Ձսպանակի հանում և տեղադրում	1822	1758	2407	1771	2573	1520	2393	1535
95	Ձսպակի հանում և տեղադրում	1822	1758	2407	1771	2573	1520	2393	1535
96	Ձսպակի վռանի փոխարինում	2915	2009	3851	2024	2941	1737	2735	1755
97	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2186	2009	2888	2024	2941	1737	2735	1755
98	Ներքևի լծակի հանում և տեղադրում	1822	3766	2407	3794	5515	3257	5129	3290
99	Ներքևի լծակի վռանի փոխարինում	1822	2009	2407	2024	2941	1737	2735	1755
100	Առջևի աջ կամ ձախ ձգանի հանում և տեղադրում	2368	2009	3129	2024	2941	1737	2735	1755
101	Միջին ձգանի հանում և տեղադրում	1822	1883	2407	1897	2757	1628	2564	1645
102	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	729	2134	963	2150	3125	1845	2906	1864
103	Վերևի լծակի հանում և տեղադրում	2186	3766	2888	3794	5515	3257	5129	3290
104	Վերևի լծակի վռանի փոխարինում	2550	2260	3370	2276	3309	1954	3077	1974
105	Գնդե հոդակապի փոխարինում	2915	3515	3851	3541	5147	3040	4787	3071

106	Ծայրակալի հանում և տեղադրում	1822	2260	2407	2276	3309	1954	3077	1974
107	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2915	3766	3851	3794	5515	3257	5129	3290
108	Առջևի կայունարարի վռանի փոխարինում	1457	2009	1926	2024	2941	1737	2735	1755
109	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1457	1004	1926	1012	1471	868	1368	877
110	Հետևի զսպանակի փոխարինում	1822	2009	2407	2024	2941	1737	2735	1755
111	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1822	2009	2407	2024	2941	1737	2735	1755
112	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	2915	3013	3851	3035	4412	2605	4103	2632
113	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	2915	3013	3851	3035	4412	2605	4103	2632
114	Կայունարարի կանգնակնի հանում և տեղադրում	2915	3264	3851	3288	4779	2823	4445	2851
115	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	2186	1255	2888	1265	1838	1086	1710	1097
116	Անկյունագծային լծակի վռանի փոխարինում	2186	1004	2888	1012	1471	868	1368	877
117	Անվաբացքի կարագավորում	2915	3766	3851	3794	3676	2171	5129	3290
118	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1093	753	1444	759	1103	651	1026	658
	8. Ղեկային մեխանիզմ								
119	Ղեկային կալունի հանում և տեղադրում	5465	7533	7221	7588	11029	6514	10257	6580
120	Ղեկային կալունի վերանորոգում	18217	32642	24069	32882	44116	26054	44447	24126
121	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	1822	3013	2407	3035	4412	2605	4103	2632

